ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

15 մարտի 2011թ. **N ..... -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» N 55-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 35-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«35. Վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը սահմանվում է հողամասերի կադաստրային արժեքի՝

1) հողի վարձակալության դեպքում՝

ա. սրճարանների զբաղեցրած հողամասերի համար՝ 10 տոկոս.

բ. բենզալցման կայանների զբաղեցրած հողամասերի համար՝ 20 տոկոս.

գ. տաղավարների, կրպակների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

դ. ավտոտնակների զբաղեցրած հողամասերի պայմանագրի ժամկետի ավարտից հետո մինչև 31.12.2015թ՝ 3 տոկոս.

ե. արտադրական նպատակային նշանակության տարածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 3 տոկոս.

զ. բակային տարածքներում հասարակական նպատակային նշանակության քարե կառույցների, ինչպես նաև քարե շինությունների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

է. էներգետիկայի, կապի և այլ ենթակառուցվածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

ը. գովազդային վահանակներով զբաղեցված հողամասերի համար՝ 40 տոկոս.

թ. ընդերք օգտագործման լիցենզիա ունեցող սուբյեկտների զբաղեցրած հողամասերի համար՝ 7 տոկոս։

2) կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքում՝

ա. սրճարանների զբաղեցրած հողամասերի համար՝ 10 տոկոս.

բ. բենզալցման կայանների զբաղեցրած հողամասերի համար՝ 20 տոկոս.

գ. տաղավարների, կրպակների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

դ. ավտոտնակների զբաղեցրած հողամասերի պայմանագրի ժամկետի ավարտից հետո մինչև 31.12.2015թ՝ 3 տոկոս.

ե. արտադրական նպատակային նշանակության տարածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 3 տոկոս.

զ. բակային տարածքներում հասարակական նպատակային նշանակության կառույցների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

է. էներգետիկայի, կապի և այլ ենթակառուցվածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

ը. հասարակական նպատակային նշանակության քարե շինությունների զբաղեցրած հողամասերի համար 5 տոկոս.

թ. գովազդային վահանակներով զբաղեցված հողամասերի համար՝ 40 տոկոս.:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի Հ. 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մինչ Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման ընդունումը հողի վարձակալության և կառուցապատման տարեկան վարձավճարի չափը սահմանված է եղել հողի կադաստրային արժեքի 1 տոկոս, իսկ վերոհիշյալ որոշման ընդունումից հետո տարեկան վարձավճարի չափ է սահմանվել է հողի կադաստրային արժեքի 3 տոկոսը։

Երևան քաղաքում ավտոտնակների, սրճարանների, բենզալցման կայանների, տաղավարների, կրպակների, արտադրական նպատակային նշանակությամբ տարածքների, բակային տարածքներում հասարակական նպատակային նշանակության կառույցների, քարե շինությունների, էներգետիկայի, կապի և այլ ենթակառուցվածքների զբաղեցրած հողամասերի համար կնքված վարձակալության պայմանագրով վճարները որոշվել է առանց հաշվի առնելու իրականացվող գործունեությունը, շինության տեսակը։

Ստեղծված իրավիճակը չի նպաստում Երևան քաղաքի զարգացմանն ուղղված կանաչապատման, կառուցապատման, բարեկարգման և տնտեսության այլ բնագավառներում ծրագրերով նախատեսված ուղղություններով կատարվելիք աշխատանքների ապահովմանը։

Ելնելով վերոհիշյալից՝ ներկայացված նախագծով առաջարկվում է ըստ խմբերի կանոնակարգել հողամասերի վարձակալության, կառուցապատման, գովազդային վահանակներով ծանրաբեռնված հողամասերի համար նախատեսվող տարեկան վճարների տոկոսադրույքները։

Երևանի ավագանու որոշմամբ վարձակալության, կառուցապատման, գովազդային վահանակներով զբաղեցված հողամասերի վարձավճարների նոր չափերի վերաբերյալ առաջարկության ընդունման դեպքում կվերանայվեն հողի վարձակալության, կառուցապատման բոլոր պայմանագրերը՝ դրանց գործողության ժամկետի ավարտից հետո։

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն։

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ի -N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ի -N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում նախատեսվում է 1,0մլրդ ՀՀ դրամի ավելացում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ